ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՈՒԽՏԻ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՄԱՏՈՒՑԵՑ ԿՈՏԱՅՔԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ

Փետրվարի 9-ին Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, մատուցվեց Ուխտի հերթական Ս. Պատարագը: Մայր Տաճարի օծման 1700-ամյակի փոնակատարությունների ծիրից ներս այս անգամ հայոց հոգևոր կենտրոն ուխտի էին եկել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Կոտայքի թեմի հավատացյալները: Օրվա պատարագիչն էր Կոտայքի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Առաքել եպս. Քարամյանը:

«Ուր էլ որ լինի հայը, նա չի կարող հոգով հեռու մնալ Մայր Աթոռ Ս. Էջմիածնից, ուր էլ որ լինի հայը, նա չի կարող իր հոգում և սրտում չունենալ մանրակերտը Միածնաէջ այս սուրբ տաճարի»,- անդրադառնալով Ս. Էջմիածնի խորհրդին՝ ասաց Սրբազան Հայրը (տե՛ս էջ 24): Հանուն Վեհափառ Հայրապետի ուխտավորներին ողջունեց նաև Մայր Աթոռի դիվանապետ Հոգեշնորհ Տ. Արշակ վրդ. Խաչատրյանը:

Սրբազան արարողությանը ներկա էին բարձրաստիճան հոգևորականներ, Կոտայքի մարզպետ Կովալենկո Շահգելդյանը, մարզային և քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ:

Հավարտ Ս. Պատարագի ուխտավորներին Վեհարանում ընդունեց Վեհափառ Հայրապետը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ